Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

362
Մ-88

№ 1792

Վեցերորդ ձրի յաւելուած «Առողջապահիկ բերբ» ի

ԲԺՇԿԻ ԹԵՐԹԻԿՆԵՐ № 2

ՆՈՒԷՐ ԾՆՆԴԿԱՆՆԵՐԻՆ

Կազմեց ԲԺ. Լ. Մ. ՄՕՆԻՆ

(Փոխադրութիւն Դ-ր Վ. Ա.)

Տպարան
«ՀԵՐՄԷՍ»
1904.
(20)

Дозволено Цензурою Тифлисъ. 12-го Мая, 1904 года.

1 MAR 2016

362
Մ-88

-դի ստրոֆագրի

Վեցերորդ ամի յաւելուած «Առողջապահիկ բիբր»-ի

ԲԺՇԿԻ ԹԵՐԹԻԿՆԵՐ № 2

ՆՈՒԷՐ ԾՆՆԴԿԱՆՆԵՐԻՆ

N 74
N 74

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱԲԵՐ
ՍԼՈՎԱԿԱՆ - ԻՆՖԻՆԵԱՆ
23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1929 Թ.

Կազմեց Բժ. Լ. Մ. ՄՍՍԱԿ

(Փոխադրութիւն Դ-ր Վ. Ա.)

Տպարան
«ՀԵՐՄԷՍ»
1904.
(20)

04.07.2013

43.322

Дозволено Цензурою Тифлисъ. 12-го Мая, 1904 года.

362
Մ-88

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԱՌԱՋ ԱՌԷՐ
ՊԵՏՈՒԹԵԱՆ - ԻՆՖԻՆԵԱՆԻ
23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1929 ԹՎԻՆ

ՆՈՒԷՐ ԾՆՆԴԿԱՆՆԵՐԻՆ

Ամեն կին գիտի, որ ազատուելուց ու ընկերքը ընկնելուց յետոյ դեռ նա վտանգի մէջ է, որովհետև կարող է հիւանդանալ։ Այդ հիւանդութիւնը ծննդական ջերմն է, որից կանայք սարսափում են, և իրաւունք էլ ունին, քանի որ այդ ջերմը չափազանց վտանգաւոր է և կարող է մահ առաջացնել.

Առաջուայ ժամանակները ծննդական ջերմը շատ աւելի յաճախ էր պատահում քան հիմի։ Անչափ կանայք զոհ էին գնում նրան։ Հիմի աւելի քիչ է պատահում, որովհետև բժշկականութիւնը միջոցներ է գտել նրա դէմ առնելու և կանանց այդ սարսափելի ցաւից փրկելու համար։

1008
35803

Թէ ի՞նչ են այս միջոցները, կտեսնեն՝ք յետոյ, իսկ այժմ ասեն՝ք, թէ ո՞րտեղից է առաջ գալիս նա և ինչի՞ մի կին հիւանդանում է այդ ցաւով, իսկ միւսը—ոչ.

Երբ մի ծննդական հիւանդանում է, իսկոյն հաւաքւում են դրացի կանայք ու ամէն պառաւ իսկոյն բժիշկ է դառնում ու բացատրում է, թէ ինչից է առաջ եկել այդ ցաւը։

Մէկն ասում է «մրսել ա», մի ուրիշը, թէ «աւելորդ բան ա կերել», մի երրորդը, թէ «վախից է»։ Բայց ամենքն էլ սխալւում են, պատճառը ուրիշ է։

Լաւ իմացէք, որ ծննդկան տենդը վարակիչ հիւանդութիւն է եւ ինքն իրան երբէք չի գալիս, այլ մէկը հեսը բերում է ու վարակում ծննդկանին և, քանի որ ամենից շատ յարաբերութիւն ունեն ծննդկանի հետ տատմէրները, ուրեմն նրանք են բերում իրանց կեղտոտ շորերի ու ձեռների հետ այդ վարակող թոյնը։ Հիմի տեսնենք, թէ ինչ է այդ վարակը կամ թոյնը, որը ընկնելով ծննդկանի սեռական գործարանների մէջ, այդպիսի սարսափելի հիւանդութիւն է առաջ բերում։

Եթէ վերցնենք մի կաթիլ այն հեղուկից, որը հոսում է հիւանդացած ծննդկանի սեռական գործարաններից և դնենք ապակու վրա ու մանրացոյցով (մեծացնող գործիքով [1]) որն ամեն առարկայ մեծացնում է 1000 – 2000 անգամ) դիտենք, կտեսնենք որ այդ մի կաթիլ հեղուկի մէջ լողում են անթիւ անհամար մանր կէտեր, որոնք առաջ չէին երևում։ Հէնց այդ

[1]) Տես Վ. Արծրունու «Վարակիչ հիւանդ. ու նրանց թոյները» գրքոյկը։

մանր կէտերն են հիւանդութեան պատճառը։ Սրանից յետոյ վերցրին հիւանդ կնոջ արիւնից էլ մի կաթիլ ու էլի նայեցին խոշորացոյցով ու էլի գտան այս կէտերը։ Այն ինչ առողջ կնոջ վրա երբէք այդ կէտերը չեն գտնում։ Սրանք մի տեսակ սունկեր են, որ անուանում են միկրոբ։

Առաջին անգամից անհաւատալի կթի, որ այս տեսակ չնչին սունկերը (որ պիտի հազար անգամ մեծացնենք, որ երևան) կարող են այնպիսի սարսափելի հիւանդութիւն առաջ բերել, ինչպիսին է ծննդկան ջերմը։ Բայց մի՛ մոռանաք, որ այս միկրոբները սարսափելի արագութեամբ աճում են։ Մէկը կիսւում է երկու դառնում, յետոյ այս երկուսն էլ են կիսւում չորս դառնում և այսպէս անվերջ։ Այնպէս որ մի օրուայ մէջ մէկից հազարներ ու միլիոններ են գոյանում ու լցւում արեան մէջ. այս բիւրաւոր միկրոբները իրանցից մի սարսափելի թոյն են արտադրում—թոյն, որը և թունաւորում է խեղճ ծննդկանին։

Բայց ի՞նչ ճանապարհով են մտնում այդ սունկերը կնոջ մարմինը։

Այս էլ պիտի լաւ հասկանալ։

Ամենից առաջ ասենք, որ երեխան կնոջ արգանդից դուրս գալիս, զուտից միշտ քիչ թէ շատ պատռուածքներ է առաջ բերում մոր սե-

ական գործարանների վրա։ Համարեա միշտ, (մանաւանդ առաջին անգամ ծնող) ծննդականի ներքին մասերում փոքր թէ մեծ վէրքերեն մնում, որոնք յետոյ լաւանում են։ (Երբեմն պատռուածքը մեծ է լինում ու ինքն իրան չի լաւանում)։ Հիմի եթէ այս վէրերը կեղտոտուում են, նրանց վրա բուն են դնում ծննդկան ջերմի մանր սունկերը ու արագութեամբ աճում, շատանում, լցուում արեան մէջ և տարածուում կնոջ մարմնի մէջ։

Իսկ ի՞նչպէս են կեղտոտուում կնոջ մասերը, կհարցնի ընթերցողը։

Բացատրենք։ Ամենից շատ երկիւղալի են տզէs ու կեղտոտs տատմէրները։ Նրանք իրանց կեղտոտ ձեռներով դիպչում են ծննդկանին ու այդ վէրքերը կեղտոտում։ Երևակայեցէք, որ այդ կեղտոտ կինը մի հիւանդ ծննդկանի մօտից գնում է մի ուրիշ կնոջ ազատելու։ Ի հարկէ, հիւանդի վրայի թոյնը նրա ձեռներին կպած է մնացել, ուրեմն նա առողջ կնոջ ազատելիս, սրա վրայի վէրքերն էլ կկեղտոտի ու այդպիսով կթունաւորի սրան էլ։ Իսկի անհրաժեշտ էլ չէ, որ տատմէրը հիւանդի մօտ եղած լինի, բաւական է, որ նրա ձեռները

մաքուր չլինեն, էլի կարող է հիւանդացնել ծննդկանին, որովհետև յիշած սունկերը միշտ կան կեղտի մէջ ու շորերի վրա, կահ-կարասիքի վրա—ամեն տեղ, բաւական է, որ նրանցից մի քանիսը ընկնեն ծննդկանի յիշած վէրքերի վրա, իսկոյն կշատանան ու բիւր կդառնան։

—Բայց մի՞թէ հնար չկայ այդ չնչին թշնամու դէմ, բաս ի՞նչ անենք, որ ոչնչացրնենք դրան, կհարցնի ընթերցողը։

Մի շատ հասարակ հնար կայ, որ ամեն ծննդկան կին պիտի գործ դնի։

Դա մաքրութիւնն է։

Ինչպէս որ քարի վրա չի կարող աճել ու բուսել ցորենի հատիկը, այնպէս էլ այդ ցաւի թոյնը չի կարող զարգանալ մաքրութեան մէջ։ Ի՞նչի. որովհետև նրա սնունդը կեղտի մէջն է։ Կեղտոտութեան մէջ ամեն տեսակ վնասակար սաղմեր են բուն դնում։ Ծննդկանի հիւանդութեան միկրոբն էլ կեղտոտութիւն է սիրում։

Ուրեմն մաքրութիւնը ծննդկանի ջերմի դէմ ամենազօրեղ միջոցն է։ Այն կինը, որ ուզում է չհիւանդանալ, պէտք է մաքուր պահի իրան ծնունդի եւ յետագայ օրերը։ Այդ հասարակ բանը ոչ միայն մեր գիւղացի կա-

նայք չեն հասկանում, այլ չեն հասկանում նոյնպէս և տատմէրները, որոնք երեխայ են ընդունում։

Իսկական մանկաբարձուհիները այս բաները սովորած են լինում առանձին ուսումնարաններում և դրա համար էլ երբեք չեն հիւանդացնում ծննդկանին, այլ մաքուր են պահում իրանց և ծննդկան կնոջն էլ սովորեցնում են մաքուր ապրել, որ չհիւանդանայ։ Բայի այդ, մանկաբարձուհիները սովորած են, թէ ի՛նչպէս է գալիս երեխան, կանոնաւո՛ր է նրա դիրքը արգանդում թէ վատ, ի՛նչպէս անել, որ երեխան հեշտ դուրս գայ և վերջապէս ի՛նչպէս պիտի խնամել թէ մօրը և թէ երեխային։ Նրանք իմանում են, որ այս ինչ ծնունդը դժուար կլինի և բժիշկ են հրաւիրում։ Երկու տարի շարունակ մանկաբարձուհիները սովորում են ուսումնարանում ու երբ աւարտում են, նրանց հարց ու փորձ են անում, քննութիւն են անում, որ իմանան, թէ լա՞ւ են հասկացել իրանց պարտաւորութիւնները թէ ոչ։ Եւ այն ժամանակն են միայն թուղթ տալիս, երբ տեսնում են, որ ամեն բան լաւ սովորել են։

Այս բոլորը գրում եմ, որ ցոյց տամ մեր գիւղացի կանանց, թէ ինչքան վտանգաւոր

բան է ծննդկանին կեղտոտ ու տգէտ տատմէրների ձեռը տալը։ Չէ՞ որ սրանք իսկի հասկացողութիւն չունեն ոչ մի բանի մասին։

Ուրեմն ով սիրում է իր կեանքը, չպէտք է հաւատայ տատմէրներին եւ անպատճառ պիտի դիմի ուսում առած մանկաբարձուհուն։ Դուք կարծում էք, թէ մանկաբարձուհին շատ փող կառնի, բայց սխալւում էք։ Այս կնանիքը խղճով են, աղքատներին էլ ուրախութիւնով կօգնեն։ Իսկ ամեն քաղաքում ու շատ գիւղերում էլ կան և այնպիսի մանկաբարձուհիներ, որոնք քաղաքից կամ տէրութիւնից ռոճիկ են ստանում ու պարտաւոր են աղքատներին առանց փողի խնամել։

Վերջապէս չէ՞ որ շատ քաղաքներում ծննդատներ կան, ուր ձրի են ընդունում ծնող կանանց։ Այդ տներում աղքատ կինը պիտի մտնի, դա ամօթ չէ։ Եւ ինչքա՜ն յարմարութիւններ կան այնտեղ։ Լաւ սենեակ, մաքուր անկողին, մաքուր ապիտակեղէն, ամեն օր լողացնում են—մաքրում պարկող կանանց, լաւ կերակրում ու ամեն բան հոգում նրա մասին։ Իսկ երբ կինը ծնում է, երեխային խնամում են, ինչպէս կարգն է։ Մի խօսքով այնտեղ համ ծննդկանն է ապահովուած, որ առողջ կմնայ, համ էլ երեխան չի փչանայ։

Ինչ ամօթ բան է այնտեղ մնալը, իսկ մեր կանայք քաշւում են ու չեն օգտւում այս բարիքից։

Հիմի ասենք, թէ ի՞նչ պիտի անի ծնող կինը այն գիւղերում, որտեղ ոչ այսպիսի ծնընդատներ կան, ոչ էլ կարգին մանկաբարձուհի։

Ի հարկէ, այդպիսի տեղերում ճարահատեալ պիտի տատմէր կանչել, բայց նրանց մօտ մի՛ թողէք, մինչև որ ձեռները մինչև արմունդը տաք ջրով ու սապոնով մի քանի անգամ չլուանան, եղունկները չկտրեն ու չմաքրեն։ Պահանջեցէք, որ շորերը մաքուր լինեն ու վրան մի մեծ մաքուր գոգնոց կապեն։ Ձեռները տաք ջրով ու սապոնով լաւ լուանալուց յետոյ, տատմէրը պիտի թունդ արաղ (սպիրտ) լցնի ձեռներին ու լաւ տրորի։ Եթէ տեղս բժիշկ կամ դեղատուն կայ, պիտի այնտեղից կարբոլեան թթթուութի խառնուրդ վերցնել (ինչպէս դեղատանը կասեն) ու նորից այդ ջրով մէկ էլ լուանալ թեւերը։ Այսպէս մաքրած ձեռները վտանգաւոր չեն ծննդկանի համար ու տատմէրը կարող է երեխան ընդունել և ծննդկանի սեռական մասերին ձեռ տալ։

Մէկ էլ պիտի իմանաք, որ տատմէրը

ձեռները մաքրելուց յետոյ էլ ոչ մի բանի չպիտի ձեռ տայ, թէ չէ էլի հիւանդութեան թոյնը կկպնի ձեռներին։ Վերջը, երբ ծընընդկանը ազատուած կլինի ու ամէն բան վերջացած, նոր տատմէրը կարող է երեխային խնամել և այլն։

Բայց բաւական չէ, որ տատմէրը մաքուր լինի, ծննդկանը պիտի աշխատի, որ ինքն էլ ու տան միջի բոլոր բաներն էլ մաքուր լինեն։ Սուտ է, թէ միայն հարուստ կինը կարող է մաքուր պահել իրան ու իր տունը։ Ամեն աղքատ կին, եթէ մաքրութիւն է սիրում, կարող է և պէտք է մաքրասէր լինի։ Չէ՞ որ մաքրութիւնը իր համար, իր նորածին երեխայի համար է։ Մեր յիշած սունկերը, որոնք հիւանդութեան թոյնն են, կարող են գտնուել նմանապէս և մարդի մարմնի վրա, եթէ մարդ կեղտոտ է, շուտ-շուտ չի լողանում։

Ուրեմն ամենից առաջ յղի կինը պիտի իր մարմինը մաքուր պահի։ Ի՞նչպէս։ Լողանալով։ Ամէն յղի կին պիտի շուտ շուտ լողանայ, սկզբում երկու շաբաթը կամ շաբաթը մի անգամ, իսկ վերջին ամիսները—անպատճառ շաբաթական մի երկու անգամ։ Լողանալու ջուրը շատ տաք մի արէք, թէ չէ

կարող է ժամանակից առաջ ազատուել։ Լողանալ բաւական չէ. պէտք է ամեն օր գոլ ջրով ու սապոնով լաւ լուանալ մազոտ տեղերը, որովհետև այդ տեղերը աւելի շատ են կեղտակալում։ Եթէ դեղատուն կայ, պիտի առնէք բորաթթուաթ, (որ ռուսերէն ասում են բորնայա կիսլոտա), որից մի թէյի գդալ հալեցրէք տաք ջրի մէջ ու դրանով լաւ շրփէք այդ մասերը։ Աւելորդ է ասել, որ երեսն ու ձեռները, եղունգները միշտ պէտք է շատ մաքուր լինեն։

Բայց մի՛ մոռանաք, որ ինչքան էլ մաքուր լինի մարդի մարմինը, հէնց որ կեղտոտ շորեր հագնէք, նա կկեղտոտուի։ Ուրեմն կնոջ սպիտակեղէնն էլ, շորերն էլ պիտի միշտ մաքուր լինեն։ Ինչ դժուար բան է շապիկը շուտ շուտ լուանալ կամ մի քանի շապիկ ունենալ, որ փոխէ փոխ հագնի։

Այդ էլ բաւական չէ։ Մաքուր պահէ՛ք ձեր տունն ու տեղը։

Ամէն օր յատակը, պատերը թաց շորով սրբէ՛ք, տան միջի բոլոր բաները մաքրեցէ՛ք, որ թոզ չնստի, իսկ եթէ յատակը հող է, ջրջնէ՛ք, յետոյ աւլէ՛ք, մաքուր փալաս զցէ՛ք, որ ամեն օր դուրս կանէք, թափ կտաք և շաբաթը գոնէ մի անգամ կլուանաք։

Ծնելու օրերը աւելի ևս մաքրութիւն է հարկաւոր։

Եթէ յղի կնոջ վրա խոցեր, վէրքեր կամ հէնց պզուկներ կան, անպատճառ բժշկին դիմէք, որ բժշկի։ Իսկ եթէ բժիշկ չկայ, ուղղակի արաղով լուացէք (կամ կարբոլեան թթուաթով, եթէ կարելի է ճարել) ամեն օր, մի կտոր մաքուր շոր էլ թաթախէք մէջը, դրէք վէրքի վրա ու կապէք։

Նորածին երեխայի համար պիտի վաղօրօք հետևեալ իրերը պատրաստէք։

2 սաւան (դոշակի չարսաբ)։ 2 սրբիչ, մի քանի լաթ եւ եփ տուած ջուր, որ պիտի լցնէք շիշերի մէջ կամ մի նեղ բերան ամանի մէջ ու բերանները խցանով փակէք։ Իսկ ով կարող է, պիտի պատրաստի նոյնպէս մէկ արշին մոմաշոր (կլեյեօնկա)։

Այս են մեր խրատները յղի ու ծննդկան կանանց։ Իրանց օգտի համար ենք գրում այս թերթը։ Ամեն կին, ով ուզում է առողջ ծրնունդ ունենալ ու ինքն էլ առողջ մնալ, պիտի հետևի մեր խրատներին։

Ո՛վ ճշտօրէն կատարի մեր ասածները, նա չի հիւանդանայ ծննդական [illegible] սարսափելի հիւանդութիւնից։

(Պէտք է ծալել երեսները [illegible])

ՅԻՇԱՏԱԿ
ԻՐԼԱՐԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՀՈՒՆՎԱՐԻ 1929 ԹՎԻՆ

«Ազգային գրադարան»
NL0212647

43. 322